4099
hmyltplt G

22
P-27

(N°11)

22
F-27
461
35508
1099
41

ԲԱՆ

ԱՌ ՀԱՅԿԱԶՆԵՐՑ ԿՐԻՍՏՈՆԵՐՑ,

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵՆԷ Ռուսաց Ազատ
ՕՀԱԾԱՇՈՒՆՉ ԺՈՂՈՎԻՆ,

ՈՐ Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ։

ԹԱՐԳՄԱՆԷԱԼ Ի Ռուսական Բարբառոյ Ի Յովսէփ
Ս. Յովհաննիսեանէ։

Ի ՊԵՏԵՐԲՈՒՂԻՍ 1816-ԱՄԿԷ։

ՌԱՐՀԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆԱՒ ՀԱՍՏԱՏԵԱԼ
Ի Տպարանի Նորին Յով. Յովհաննիսեան։

ՀՐԱՄԱՆԱՒ ՄԵԾԱՒՈՐԱՑ։

ՊԵՏ ԿԱՌ ՊՐՈՖԻՍԻՈՆԱԼ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ц. им. А. Мясн
ԳՐԱԴԱՐԱՆ

27598-62

366-47

ՌԱՆ

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Աճաշունչ ժողովոյն որ 'ի Ռուսաստան.

ԱՌ Հայկապէտայ Քրիստոնէայս.

ԺՈՂՈՎՆ Բիբլիական. այնէ Աճաշնչի արդէն տարածեալ յոլովորոց տիեզերայ՝ օրհնուելթեամբ Ամենաբարձրելոյն ահա երեք ամք են. յորմէ նաև հաստատեցաւ 'ի Ռուսաստան: Ապա հետ զհետէ և յայլ զանազան տէրութիւն միանգամայն սփռեցաւ սոյն օրինակ օգտաւէտ գործ յօժանդակութի առաջնոց. որոց ամենուն նախնական նպատակն է յայտնեցուցանել զՇմբռնակիչս երկրի բանիւն Աստ. ՝ի, հին և նոր կտակարանաւն յիւրաքանչիւր լեզուս: Յայտ է թէ Աճաշունչ գիրք. ոչք կոչին հին և նոր կտակարանք՝ գրեալք յառաքելոց և 'ի մարգարէից ազգմամբ Հրէայն՝ են Հշմարիտ բանք Աստ: Զ. Պետ. 1. 21: Քանզի ոչ թէ ըստ կամաց մարդկան երբէք ասուաւ մարգարէութի. այլ մարդիկք Հոգւով սրբի խօսեցան զԱստ. ըստ այսմ ոչոք 'ի հաւատացելոց յերկրայս լինի. եթէ ամենայն Քրիստոնէական վարդապետութիք հիմնեալ են 'ի վերայ Աճային մատենիս. որպէս ասէ Առաքեալն Պողոս. եմ զիրք Աճաշունչք կարօղք են խմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն. 'ի ձեռն հաւատոյ՝ որ 'ի Քրիստոսի: Զի ամենայն գիրք

Աճաշունչք և օգտակարք, 'ի վարդապետութիւն են՝ և 'ի յանդիմանութիւն, և յուղղութիւն՝ և 'ի խրատ արդարութեան։ Զի կատարեալ իցէ մարդն Աստ՝ յամենայն գործս բարութեան հաստատեալ։ 2. Տիմ. 3. 15. 16. 17։ Քանզի նովաւ իմանամք զանկուռն առաջնաստեղծ մարդոյն. որ սահեցեալ մեղաւք՝ յաւիտենական մահուամբ դատապարտեցաւ, ինքնին եղեալ առիւթ թշուառութեան իւրոյ։ Բայց ոչ զառաջինն ծանուցանէ մեզ Աճաշունչ գիրքն զթշուառութի մարդոյ. նոյնպէս ծանուցանէ և զՀշմարիտ դուռն փրկութեան. որոյ միջնորդ՝ է միայն բանն Աստուծոյ. որ ըստ ամի պարունակի յայսմ մատենիս՝ թարց որոյ անհնար է գտանել մեզ զմուտ ընդ լուսաշաւիղ պողոտայ երթալոյ. որպէս և Փրկիչն մեր ասէ. յօհ. 14. 6։ Ես եմ ճանապարհ, և Հշմարտութիւն, և կեանք։ ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինձ։ Եւ դարձեալ ասէ յօհ. 3. 16։ Այնպէս սիրեաց Աստ զաշխարհ. մինչև զորդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ 'ի նա, ոչ կորիցէ. այլ ընկալցի զկեանս յաւիտենականս։ Այսպէս և արքայն Առաքեալն Պետ. գրէ 'ի գործ. 4. 12։ Զի և ոչ այլ անուն գոյ 'ի ներքոյ երկնից տուեալ 'ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ։ Այլ և Առաքեալն Պօղ. գրէ՝ առ հռօմ. 3. 23. 24. 25. Քանզի ամենեքեան մեղան. և նուազեալ են 'ի փառացն Աստ։ Եւ արդարանան ձրի նորին շնորհաւք՝ 'ի ձեռն փրկութեան որ 'ի Քրիստոս։ Զոր յառաջն եդ Աստ 'ի քաւութիւն 'ի ձեռն հաւատոյն

Աբեամբ նորա, 'ի հանդէս արդարութեան նորա, վասն թողութեան յառաջագոյն մեղացն գործելոց։ Այնուհետև զի և սուրբ Աւետարանիչն Յովհ. 1. Յովհ. 5. 20։ Եւ գիտեմք՝ եթէ որդին Այ եկն, և ետ մեզ միտս. զի ծանիցուք զՃշմարիտն Աստ. և իցեմք 'ի Ճշմարտի որդւոյն նորա Յի Քրի։ Եւ Փրկիչն մեր ասէ յԱւետարանի իւրում. Յովհ. 14. 23։ Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ. և հայր իմ սիրեսցէ զնա։ Եւս Յովհ. 12. 46. Ես լոյս՝ յաշխարհ եկի. զի ամենայն, որ հաւատայ յիս, 'ի խաւարի մի մնասցէ։ 47. Եւ եթէ ոք լսիցէ բանից իմոց, և ոչ պահեսցէ, ես ոչ դատեմ զնա. քանզի ոչ եկի, թէ դատեսցիս զաշխարհս այլ զի փրկեսցեմ զաշխարհս։ 48. Որ անարգէ զիս, և ոչ ընդունի զբանս իմ. զոյ՝ որ դատէ զնա։ բանն, զոր ես խօսեցայ, նա դատէ զնա յաւուրն յետնում։ զի, Մատ. 24. 35. ասէ։ Երկինք և երկիր անցցեն. և բանք իմ մի անցցեն։ Եւ սրբազանն Պօղ. ասէ. Յա Քա եկն յաշխարհս 'ի փրկել զմեղաւորս ըստ բանի Տն՝ թէ ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։ Եւ այսպէս յամենայն ուրեք խօսի ընդ մեզ պարզ բանիւք. զոր ինչ միանգամ՝ հարկաւորն է վասն մերոյ փրկութեան։ Կոչէ զմեզ առ ինքն՝ զի հաւատասցուք 'ի նա, և ունիցիմք զկեանս յաւիտենականս։ Ահա այսու ամենայիւ տեսանեմք զամ նախապուշակութիւնս մարգարէից յԱծաւնչի անդ յաղագս փրկութեան մերոյ, որ կատարելոց էր 'ի ձեռն մարդեղութեան և դալոստեան բանին Այ։ Հին կտակարանն՝ էր մի-

այն ատու�՝ այնմ, որ Աշմարտապէս կատարե-
լոյն էր 'ի նոր կտակարանի, փրկելով զմեզ 'ի
մշանջենաւոր մահուանէ՝ չարչարանօք և Աբ-
եամբ Տն մերոյ Յն Քն, շնորհելով մեզ ուխտ
նոր լաւագոյն քան զառաջինն. որպէս և գրի
առ Եբր. 8. 6. Բայց արդ առատագոյն ևս պաշ-
տաման եհաս Յս. որչափ լաւագոյն ևս ուխտի
է միջնորդ՝ որ յառաւել աւետիսն օրինադրե-
ցաւ։ Եւ այս ուխտ էր՝ զոր խօսեցաւ Տր՝ բերա
նով երեմիայի մարգարէի. 31. 31. Ահաւասիկ
աւուրք գան ասէ Տր. և ուխտեցից տանդ իսրա
ուխտ նոր։ 33. Այլ այս է ուխտ զոր ուխտեցից
տանդ իսրա յետ աւուրցն այնոցիկ ասէ Տր. տաց
զօրէնս իմ 'ի միտս նոցա. և 'ի սիրտս նոցա գր
բեցից. և եղէց նոցա յԱծ. և նոքա եղիցին
ինձ 'ի ժողովուրդ. 34։ Եւ մի ևս ուսուցանիցեն
իւրաքանչիւր զընկեր իւր. և իւրաքանչիւր զեղ-
բայր իւր ասել՝ Թէ ծանիր զՏր. զի ամենեքեան
ծանիցեն զիս 'ի փոքրկանց նոցա մինչև 'ի մեծա-
մեծս՝ ասէ Տէր։ Եւ ահա այս ուխտ է զոր 'ի
նոր կտակարանի ուխտէ ամենեցուն՝ որք կամին
ըստ նմա։ Եկայք առիս՝ ամենայն վաստակեալք
և բեռնաւորք՝ և ես հանգուցից զձեզ։ Առէք
զլուծ իմ 'ի ձեզ։ և ուսարուք յինէս՝ զի հեզ
եմ. և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ ան-
ձանց ձերոց։ զի լուծ իմ քաղցր է. և բեռն իմ
փոքր ոչի։ Մատ. 11. 28.

Այլ բաց 'ի զանազան և 'ի զօրեղ պատճա-
ռաց պտեղց յայսմ Աճաշունչ մատեանս, որք յոր-
դոր լինին մեզ ընթեռնուլ զայն. փորձառու-

թիւնն մեղ ազդէ և զայս. իբր թէ ընթերցա-
նուլթի Աստուծոյն տառիցս ոչ միայն հարկաւոր է
վասն փրկութեան և երանութեան հանդեր-
ձեալ կենացն. այլ մանաւանդ ի ուղղութեան
վարուց, և 'ի խրատ ընկերասիրութեան. հնա-
զանդութեան և հաւատարմութեան առ օրէնս,
և առ թագաւորն։ Անթիւ են օրինակք, որք
ճշմարտաբանեն զայս։ Ահա այնչափէ պատուական
մատեանն և փրկարիթ առ 'ի վերուստ շնո-
րհեալն սեռի մարդկան. զոր փոյթ կալաւ ընկ-
երակցութիւն Բիբլիական ժողովոյն մատուցանել
ամենայն խնդրողաց։ Եւ առ 'ի դիւրութիւն
այսորիկ՝ ժողովն Բիբլիական, որ 'ի Ռուսաստան՝ մատդրեալ է զկազարաւոր օրինակս
այսորիկ սրբոյ մատենիս ըստ իւրաքանչիւր ազգաց լեզուացն տպագրել և մատուցանել՝ ամ
հաւատացելոց առանց իրիք մատացածին շահասի
բութիւն՝ ընդ նմին ջանադրեալ է առ այլ ազգս
Ասիոյ. այսինքն առ Մահմետականս և առ
Հելլանոսս ևս հասուցանել։ Այն ժողովս
պարգևէ զԱստուծունչ մատեանն հիւանդաց՝
բանտարկելոց և տնանկաց 'ի տակս նոցին ուղ-
ղութեան։ Միով բանիւ՝ բացարձակ նպատակ Բիբ-
լիական ժողովոյս է հասուցանել զԱստուածարգև
գիրքս զայս իւրաքանչիւր անձանց ուր բովան-
դակի բանն Աստ՝ ոչ զի ամենայն ոք ընթերցեալ
ուսցի՝ ուղղեսցի. և եղիցի երջանիկ յայսմիկ
կեանս և 'ի հանդերձելումն։

Մինչ ցարդ սոյն ժողովս տպեալ է զԱստուածունչս և զնոր կտակարանս յեկեղեցական լեզուս

Ռուսաց. Հայոց. Գերմանացւոց. Փինլանդայից, ոլ է չուխնայ. Գաղղիացւոց. Լեհացւոց. Դերպ դացւոց. Պարսից. Լաթիշացւոց. և Վրաց։ Եւ Աստեղարան սրբոյն Մատթէոսի. 'ի սինէացւոց լեզու։ գումարական թուովիբ67, 100. գիրք։ Իսկ զարդիս 'ի տիպս են Աստուծաշունչն ողջոյն՝ այսինքն. հին և նոր կտակարանք 'ի միասին. յեկեղեցական լեզու Ռուսաց. 'ի լեզու Հայոց. Փինլանդացւոց. Գաղղիացւոց Էոդրոպացւոց. Վրաց. Լիդովկացւոց. Սամոգացւոց։ վաղահ և Մոլտաւիացւոց առ հասարակ 65,000 մատեան։ Եւ տակաւին կամի տպել Ցունաց հասարակ լեզուաւ ևս։ Ընդ տպելն 'ի զանազան լեզուս զԱՇխարհին գիրքն. որպէս յիշեցաւ 'ի վերոյ. ոչ մոռացաւ և զՀայոցն։

Ընկերակցութիւն Բիբլիական ժողովոյն Ռուսաստանու սրդէն տպագրեաց զ5000 նոր կտակարանս. այժմ ևս անընդհատ զգուռն հաբեալ է տպել զ5000 Աստուածաշունչս՝ յօրինակէ, զոր տպեալ է 'ի Վենէտիկ յամի 1733. հայր Մխիթար Սեբաստացի Աբբահայր անուանեալն. ըստորում այն նախընտիր համարեալ է քան զՊատպեալն Ցամստերտամ 'ի 1668։ Եւ այս 'ի տրպարանի Ցոհաննիսեան Սար. Ցովսեփայ Ցաժտերլսանցւոյ. ընդ վերատեսչութեամբ Սրբազան Ցոհաննէս Արք Եպիսկոպոսի և Առաջնորդի Հայոցն Ռուսաստանու՝ որ է ջերմեռանդ անդամ և Վիցեպրեզիտէնթ Աստուածաշունչ ժողովոյն Ռուսաց։ Նորին սրբազնութիւն յորժամ էր 'ի Պետրբուրգ անձամբ անձին վերահասու

լինէր իւրաքանչիւր տպեալ թերթիցն Աճառն-
չի իւրեանց. և բուռն զօրութեամբ անձին մաս-
նակից լինէր այլ եամ կերպիւ յառաջադիմու-
թեան։ Յետ մեկնելոյ նորին աստի՝ ևս հանա-
պազ առաքեմք զտպեալ թերթս 'ի վերահա-
սութիւն։

Եւ թէ քանի կարևոր իմն էր Հայերէն
Աճառնչի տպագրութիւն՝ բաւական է գիտել.
թէ ոլքան սակաւաթիւ էին օրինակք այսորիկ
և թանկագինք։

Հարկաւորութիւն ընթեռնլոյ զայս մատ-
եան այսինքն զԱճային բանս, լիովին ասացաւ'ի
վերոյ. ուստի և իմայօղք յաղագէ Հայոց՝ գյատ-
կութի և զփրկառիթ օգուտն ընթերցման Աճայ
ին բանիցս այսոցիկ, ցուցեալ են զմեծագոյն
բաղձանս ստանալոյ զայս գիրք 'ի լեզու իւրեանց.
նաև խոստովանին՝ թէ այսպիսի տպագրութիւն
է ճշմարիտ քարերարութիւն իւրաքանչիւր ազ-
գայ. մինչ զի իբրև տարածեցաւ համբաւս տը-
պելոյ զՀայոց նոր կտակարանս, բազումանձինք,
և մանաւանդ 'ի Հոգևորականաց Հայոց, գրե-
ցին առ Ժողովն զմեծութիւն շնորհակալութեան։

Ռիբլիական Ժողովն զտպեալ նոր կտակա-
բանս հայոց՝ առաքեաց 'ի զանազան տեղիս Ռու-
սաստանու՝ 'ի վաճառել և 'ի բաշխել։ Նպաս-
տաւորիչ Ջերմեռանդքն Ժողովոյն, ըստ ընտ-
րութեան և կոչման Սրբազան Յովհաննէս Արք
Եպիսկոպոսին Հայոց՝ ընկալան զՀոգ վաճառե-
լոյ համանգամայն և բաշխելոյ։ Որ և նշանագրե-
ցաւ 'ի Պետրբուրգ՝ Հայոց Յովսէփ Ս. Յոհան-

նիսեանն։ Յաժտարխան՝ Հայոց եկեղեցւոյ երէց փոխ Սարգիս Տէրպէնտցոմն։ 'Ի Ղզլար՝ ազնիւ Ստեփան Քալանթարոմն։ 'Ի Մօզդոք՝ վաճառական Դաւթիել Ղատիսոմն։ 'Ի Նախիջևան՝ ազնիւ Կիրակոս Արարատոմն։ 'Ի Ղարասուպազար՝ վաճառական Յովհաննէս Ղազարոմն։ 'Ի Գէորգիպուրուզ՝ վաճառական Յարութիւն Ջատէոմն։ 'Ի Ալբացտան՝ Հայոց Սբոյն Աւագ Եպիսկոպոս Ներսէսն։ Բայց 'ի սոցունց ևս վաճառին Հայոց նոր կտակարանքն 'ի Կոմիտէթն Աճառունչ Ժողովոյն, 'ի Պետերբուրգ. 'ի Մոսկով. 'ի Թէոդուզ. 'ի Յաժտարխան. և այլն։ Նաև յառաջագոյ ամի, յուսամք օրհնութիւն Տեառն՝ յաճախ հաստատանել զԱճառունչն Հայոց՝ այսինքն զհին և զնոր կտակարանս 'ի միասին և առաքել յամենայն տեղիս 'ի վաճառել կամ 'ի բաշխել։

Ուրեմն այժմ բացեալ է վասն Հայոց յորդահոս գետ իմն՝ որ բղխէ զկեանս յաւիտենականս. ըստ բանի Փրկչին Յոհ. 4. 14։ Այլ ջուրն զոր ես տայց նմա. եղիցի աղբիւր ջրոյ բղխեցելոյ 'ի կեանս յաւիտենականս։ Քանզի կարի դիւրին ճանապարհաւ կարէ ամենայն ոք ըստանալ. ըստորում 'ի բաղում տեղիս 'ի Ռուսաստան վաճառի սոյն նոր կտակարան. և յոյժ դիւրապինէ։ Իսկ աղքատք ձրի ունիցին։

Բաղում նոր կտակարանք Հայոց առաքեցան 'ի Ռուսաստանու նաև յԱնգլիայ. և անդ եղեալ Աճառունչ Ժողովն առաքեալ է զնոսա առ Հայս՝ որ 'ի տէրութեան Օսմանցւոց. և սփռեալ են արդէն յամենայն քաղաքս. յորս

բնակին Հայք. որոց իմանալով զբանն կենաց՝ օգտիցին անտի, և փառս վերադարձեսցեն Ամենաբարձրելոյն։

Ի Կալկաթն Ասիոյ ևս տպի Հայոց Աճաշունչ յանդիր եղեալ Աճաշնչի հասարակութեան՝ թուականով 2000։ Ուրեմն Հայկածին Քրիստոնեայք բնակեալք Ասիա, որպէս և Եւրոպա. գտանելոց են զանդին գանձս այս. որ օրհնութեամբ Ամենաբարձրելոյն՝ լինելոց է վասն նոցա գործիք հասուցանելոց ի նոսա զանազական գանձքն երկնային։ Ընդ ամենայն տեղիս աշխարհի Աճաշունչ գիրքն ի ձեռն սոյն Ժողովոյ ածի և բաշխմանայ ի զանազան լեզուս։ Ազգք՝ որք ի սկզբանէ մինչև ցարդ ոչ երբէք լուեալ էին զվար դապետութիւնն Քրիստոսի. այժմ ընթեռնուն զԱստուծոյ նորա իւրաքանչիւրքն ի լեզուս իւրեանց։ Քանզի Ժողովն մեծին Բրիտանիոյ ընդ այլոց ազգաց հասարակութեան, նախապէս սկզբնաւորեցաւ զայս ի 1804 թուականի. որինչ տպեալ է. կամ օգնականութիւն նորին տպեցաւ մինչև ցարդ. աւելի քան զմի միլիոն. այսինքն տասն հարիւր հազար հատ Աճաշունչ գիրք. և սոքա ամենքեան են՝ որք տպեալք են, և են՝ որք տակաւին տպին. սկսեալ յեբրայական լեզուէ. և գրեթէ գտանին երեսուն յԱսիական ազգաց լեզուէ. զորս մինչև յԱփրիկա՝ յԱմերիկա. և յայլ հեռաւոր կղզիս Արևելեան Ովկիանու եղեալ վայրենի ազգք լսեն զաքանչելի բանս Աճայինս. որք ոչ թէ միայն լսեն. այլ և ընկալնուն և ըն-

թեռնուն կարի ջերմեռանդութիւն. յորոց եբաղումք ճանաչելով զՀշմարիտ բանս նորին, 'ի բաց թողուն զՄահմետական սուտ վարդապետութիւնն, և զՀեթանոսական մոլորութիւնն։ Ապա ուրեմն ոչ ազգ Քրիստոնէից 'ի մանկութենէ ունկնդիր լեալ Աստուածային. ոչ ցընծասցէ ընդ այսպիսի յաջողութիւն և ոչ քեզ ցի ընթեռնուլ զնա՝ յարիլ 'ի նա, և շտեմարանել 'ի հոգւոջ՝ և 'ի սրտի իւրում։

Հասարակութիւնն Աճաշունչ Ժողովոյն Ռուսաց 'ի ձեռն սոյն բայայայտութեան՝ տրաւիրէ զՔրիստոսասէր Ազգն Հայոց, ընկալնուլ զայս հոգեշահ նոր կտակարան տպեալ վասն ինքեանց զի արդարև ճահ է ասել. թէ սա է ժամանակն երջանիկ. ոչ գրի ջ. Կորն. 6. ջ. Զի 'ի ժամանակի ընդունելութեան, ասէ, լուաց քեզ. և յաւուր փրկութեան օգնեցի քեզ։ ահա՛ մատ ժամանակ ընդունելի։ ահա՛ օր փրկութեան հանդիպեալ ազգին Հայոց՝ ցրուեալոյ ընդ ամենայն երեսս երկրի. որք անձեռնհաս են տպել զմեծագոյն գիրքս այս՝ զՀշմարիտ դանձն հոգևոր, 'ի պատճառս սակաւագիւտ և թանկագին լինելոյն. զոր ընթեռնլով իմաստնացեալ. գտանեն զՀանապարհն փրկութեան։ Արդարև երջանիկ ժամանակ, յորում Տէրն զօրութեանց զարթուցեաց Ռուսաստանու զյաղթանակութիւն 'ի վերայ թշնամւոյն հասարակաց։ Զ ախջախեաց զերկաթեայ եղջիւրս իշխանութեան նորին՝ որով ահացուցանէր և զԱսիա։ Ուրեմն հաճոյ էր Ամենաբարձրեալ Թագաւորին թագաւորաց.

հրատարակել՝ 'ի Ռուսաստան զտիրապէտ բանն իւր, 'ի ձեռն ընթերցման Աստուածային գրեանց՝ հին և նոր կտակարանաց։ Բայց 'ի մէջ այսքան ազգաց. որք զտանին յայսմ լայնածաւալ տէրութեան՝ միմիայն Հայք երևեցան ցանկացօղք և եռանդնոտք սոյն Աստուածոյ բանից։ Որք և յայտնեցին զինքեանս 'ի հանդիսի գովութեան այսր նպատակի հոգևորականք և մարմնաւորականք։ Սոյն Աստուածային նկատումն և ազգումն որ իսկապէս յաղագս Հայոց. չէ պարտ նոցա ընդունայն համարել։ Զի ձայն Այ է առ նոսա. ընթեռնուլ զայն՝ որ մատռուակէ նոցա զբանն կենաց. արդ՝ մի գուցէ ընդունայն եղիցի կոչումն այսու քաջ հովուի, որ ժողովէ զցրուեալսն 'ի մի։

Ռիբլիական ժողովն Ռուսաց ընկերակցութեանն բաւականութիւն սրտի հասուցանէ իւրաքանչիւր խնդրողաց՝ զհին և զնոր կտակարանս զանազան լեզուաց՝ առ ձեռն այժմ 'ի պատրաստի եղեալ. ոչ սակաւ ուրախանայ և ընդ գոր ծակիցս իւր՝ և ընդ ջերմեռանդ ընթերցողս Աստուածային բանից։ Ընկերակցութիւնս այս ստանայ զհաստատութիւն գործոց իւրոց. հարկաւոր գումարով դրամոց, միանգամայն ընծայողաց. և կամ ամ յամի՝ ըստորում զի սակաւաթիւ անձինք, ոչ կարեն 'ի յանկ հասուցանել զսոյնպիսի մեծածաւալ գործ։ Այլ բազմութեամբ կարի դիւրաւ կատարի այն՝ զոր սակաւք ոչ կարեն։ Օգնութիւնս այս՝ որ յաղագս հաստատութեան յառաջադրեալ գործոյ ժողովոյն ընկերակցու-

կախեալ կայ յիւրաքանչիւրոց կամաւոր յա-
ռատաձեռն տրոց. և մանաւանդ բարեհամբաւ
երևելի անձանց յատկացելոց, յորոց յուսայ
Կոմիդէթս տեսանել զարժանաւոր մեծագոր-
ծութիւնս թէպէտ ամենայն ոք տայ՝ որչափ կա-
մի և կարէ, բայց որչափ որ սակաւ և իցէ տուր
քն. այն ամ ընկալեալ լինի շնորհակալութիւն։

Դարձեալ քանի՞ անձինք ունին շահեալ
յայս տրոց՝ ընթեռնլով զգանս Աճային. մարթ
է ասել թէ այն ամ տուք վասն այսպիսի բա-
րի գործոյ՝ ոչ երբէք կորնչի. այլ բերելոց է
զէարիւրապատիկ պտուղս. առ հասարակ եթէ
ընթերցողաց Աճաշնչին. և թէ միանգամայն
հասուցանողաց զգիրքս առ որս չունին։ Որպէս
և Փրկիչն մեր Յա՞ Քա՞ ասէ ՅԱՀետարանի իւ-
րում. Մարկ. 9. 40. Որ ոք արբուսցէ բաժակ
մի ջուր յանուն նորա. ոչ կորուսցէ զվարձս
իւր։ Ուրեմն Ո՞վ իցէ այսուհետև՝ որ ոչ ցան-
կասցի ծառայել յամ զորութենէ և մասնակից
լինիլ վասն յայտնելոյ գծառայութիւն, կամ
նպաստաւորութիւն իւր ընկերին՝ առ յայսպիսի
փրկարարի գործ։

Բայց ծառայել ընկերին՝ ը Աճաշունչ Ժո-
վոյն, չէ պարտ իմանալ՝ մի միայն դրամով յօգ-
նութիւն հասանիլ նմա. այլ և յորդորել ըզ
միմեանս. հաղորդակցիլ առ այն ընթերցումն
Աստուածային բանիս։ Քանզի այսու յորդոր-
մամբ առաւել բոլորոքի սէր և կամք նոցին առ
ընթերցումն հին և նոր կտակարանաց՝ որով ևս
քանզևս սիրեալ տարածի ճշմարիտ Քրիստան

միակ և անհամեմատ սէրն՝ որ մեծն է քան զամ պատգամն. զոր Տէրն մեր Յ՚Ք՚ պարգևեաց մեզ։ Ա՚ այս վաղճան կարդաւորեցաւ 'ի բարձրագոյն Կոմիդէթէ տպել 'ի Հայ բարբառ և առաքել առ վիճակաւոր Ալք Եպիսկոպոսունս Հայոց, որ 'ի Ռուսաստան՝ զի նոքին ըստ հովուական պարտաւորութեան իւրեանց՝ ունիցին տա բածել առ բարեգովեալ ամենահպատակ ազգդ Հայոց 'ի հոգևոր վայելչութիւնս յայտնելով զնառս Այ և զշնորհս ողորմութեան նոցին 'ի զարդ հոգւոց և մարմնոց՝ որ 'ի ձեռն Աստծոյն՝ աբ մատենից հանդերձեալ է ձեզ պարգևել։

Վերջապ նոյն ինքն Ամենաբարձրեալն Աստ վարձատրելոց է զընթերցօղս և զունկնդիրս բանի իւրոց. զի եղիցի նմա յայնմանէ պտուղ և շահ մեծագոյն (զոր ոչինչ կերպիւ հնար է ստանալ աշխարհային ընչիւք։) զոր քնաՀ ոչ ոք կարէ այնուհետև հանել և գողանալ 'ի նմանէ։ Արդ՝ օրհնեսցի 'ի Տեառնէ մարդն այն, որ յորդորէ զայլս յընթերցումն և յունկնդրութիւն այսպիսի գրեանց, և կամ նպաստամատոյց լինի բազմանալոյն։ Երանի է ասէ Փրկիչն, ծառային այնմիկ՝ զոր եկեալ Տէրն նորա գտցէ արարեալ այնպէս. ամէն ասեմ ձեզ. զի 'ի վերայ ամ ընչից իւրոց կացուսցէ զնա։ Ղուկ. 12. 43. 44։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. Д. Мяс
ԵՐԵՎԱՆ

Digitized by Google